Ս. Էջմիածին, Ս. Զատիկ 1987

Ամեն. Տ. Եղիշէ Արիեպս. Տէրտէրեան,
Պատրիարք Հայոց,
Երուսաղէմ

«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»

Զերդ Ամենապատուութիւն,

Մեր Փրկչի Սուրբ Յարութեան աւետիսով բոլորիս վրայ վերստին իջնում է «առաւօտը լուսոյ» եւ պայծառանում յոյսը մեր կեանքի վերանորոգման, յոյսը մեղքի ու չարիքի խափանման, յոյսը բարու յաղթութեան, յոյսը մեր հոգիների խաղաղութեան:

Զատկական շնորհաբաշխ այս օրերին, մեր Մայր Եկեղեցու կամարների ներքոյ եւ մեր ժողովրդի կեանքում՝ թող առատապէս լինի «առաւօտ լուսոյ» եւ հաւատքի մշտապէս ոգին համերաշխ եղբայրութեան, թող բացուի անթառամ ծաղիկը սիրոյ եւ խաղաղութեան:

Ամենայն Հայոց աստուածակառոյց Սուրբ Էջմիածնից՝ Զերդ Ամենապատուութեան եւ Սուրբ Աթոռիդ ուխտապահ սպասաւորներին ու հաւատացեալ ժողովրդեան՝ ողջոյն եւ սէր եւ օրհնութիւն հայրապետական:

«Սրբեցէք ի բաց զհին խմորն՝ զի եղիջիք նոր զանգուած, որպէս էիք անխմորք. քանզի զատիկ մեր զեցաւ Քրիստոս» (Ա. Կորնթ., Ե. 7): Ամէն:

Եղբայրական սիրոյ ողջունիւ՝

Վ. Ա. ԶԳԷՆ Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

լուծումը վստահել եպիսկոպոսաց իրաւասութեան և կաթողիկոսական կանոնական հաստատման։

8. Նոր Տարուայ սեմին, այս խոհերով և սպասումներով, խմբագրութիւնս մաղթում է իր ընթերցողներին արևշատ խաղաղ օրեր, բարի գործերի յաջողութեամբ, համայն աշխարհի խաղաղ գոյակցութեան պայմաններում։

Թող մեր Վեհափառ Հայրապետի աղօթքը խնկի նման ուղիղ դէպի երկինք բարձրանայ՝ «Թող բարին Աստուած քաղցրութեամբ ընդունի մեր և ձեր աղօթքները, և Սուրբ Ծննդեան շնորհները թող առատապէս իջնեն մեր Մայր Եկեղեցու, մեր հաւատացող ազգի բոլոր զաւակների վրայ, այլև համայն մարդկութեան վրայ»։ Ամէն։

Շնորհաւոր Նոր Տարի և Ս. Ծնունդ։

digitised by A.R.A.R.@